Ը. ՏԱՐԻ | ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 13 ՅՈՒԼԻՍ 1905 | ԹԻՒ 730

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 "
Արտասահմանի համար տարեկան 15 « վեցամսեայ 8
Ամերիկայի համար տարեկան 3 տլ. վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երիցս աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:
—o—
Վառնայի համար ձ'ո ֆէ 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ" Варна

Redactiou du jonrnal „Charjoum" (Bulgarie) Varna
—o—
Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ
—o—
Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱԿ ՊԱՏՃԱՌԸ ԵՒ ԻՄ ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Անցեալ յօդուածներում մենք փաստերով ապացուցինք որ միշտ անընդհատ ներքին պայքար ենք մղել Դաշնակցութեան մէջ տիրող սիստեմի դէմ։ Այդ բաւական չէ, դեռ տարիներ առաջ փորձել ենք եւ հրապարակով պայքարելու, զանազան յօդուածներ հրապարակելով՝ գրված թէ ուրիշների և թէ մեր կողմից միշտ աշխատելով Դաշնակցական ընկերների աչքերը բանալ ու ուղղել դէպի ներքին վէրքերը։ Մեր վերջին ձեւի քայլը եղաւ 1899 թւի 113 թիւ «Շարժում»ի „Միրող յեղափոխականներ» Բաբա Գասպարի յօդուածով. Այդ յօդուածը հանգուցեալ Քրիստափորը ամբողջովին իր վրա ընդունելով իր յարաբերութիւնները, հայհոյական մի նամակով, խզեց թէ յօդուածագրի եւ թէ ինձ հետ։ Ու Գասպարը և ես չը վարանեցինք ընդունել բարկացած Դաշնակցութեան անձնաւորումի, ինչպէս որակեց «Դրօշակ»ը ոչ թէ Վարդօն, ինչպէս ուրիշներ սըխալ ըմբռնել են, կողմից նետված ձեռնոցը, նոյն ոճով եւ Արեւմտեան բիւրոյի միջոցով պատասխանելով։ Այնուհետեւ «Շարժում»ը շարունակեց նոյն ոգով յօդուածներ իմ կողմից, «Նախ զտում» „Զիջողութի՞ւն յեղափոխական կազմակերպութիւնների մէջ» եւ ուրիշների կողմից յայտնի «Դրօշակ»ի եւ «Բրօ Արմէնիա»յի ուղղութիւնները քննադատող յօդուածներ։

Սա մեր հետեւողականութիւնն է։

Հիմա պարզենք պատճառը մեր Դաշնակցական ընկերներին ուղղած «Բաց նամակների» երեւան գալու.

Դրանց շարժառիթը եղաւ հէնց Արեւմտեան բիւրօն. իր մէկ տեղեկագրով, այս ձմեռ, որի բովանդակութիւնը հետեւեալն էր. — Սասունը ոչնչացած է. Տարօնը աւերված Վասպուրականը գրեթէ նոյն վիճակում. Ու այս սոսկալի իրականութեան հանդէպ, իբրեւ մխիթարութիւն, հետեւեալ աւետումները տալով— Ցունվարից սկսեալ բիւրոյի մէկ անդամը պիտի աւելանայ. արտասահմանում Կովկաս, Պարսկաստան գործերը շատ յաջող են գնում!!!

Այս հոգեթափ լաւատեսութեան հանդէպ, երբ հայրենիքը աւերված է, երբ հաստատ գիտեմ թէ մտադրութիւններ կան նոր անմիտ եւ աննըպատակ ձեռնարկների դիմելու, որոնք կարող էին մի քիչ նշանակութիւն ունենալ Սասունի շարժման հետ միասին, իսկ առանձին միայն վնաս և վնաս պէտք է պատճառեն, այլեւս լռել անկարելի էր, մանաւանդ որ ես դառն փորձն ունէի թէ այդ տեսակ քայլերի առջեւը առնելը անկարելի է եղել ներքին նամակներով։

Ահա այդ դառն փորձը։

1897 թւին Բաբա Ալիի գործին ես բոլորովին հակառակ էի. իմ մի նամակով, երբ Բուլգարիայում իմացայ թէ այդ տեսակ մի նպատակ կայ, նոյնիսկ հայրենիքի դաւաճաններ անուանեցի պարագլուխներին դեռ գործը չը կատարված, մատնանշելով անյաջող բոլոր պայմանները եւ ժամանակի անյարմարութիւնը ու անելիքի չնչինութիւնը և ապագայի նպաստաւորութիւնը եթէ լուռ ու մունջ աշխատվի։ Պէտք է խոստովանել որ այդ ժամանակ արտասահմանի բոլոր պաշտօնական ընկերները հակառակ էին այդ գործին, նոյնիսկ Արեւմտեան բիւրօն. միայն „Արեւելեան» էր պահանջում։ Համաձայն չէին և տեղի ընկերները. բայց դըրսից եկած գործիչի յամառութեան ու բարոյական ճնշումին ենթարկվեցին։

Այս առթիւ աւելորդ չենք համարում մէջտեղ բերել այնժամանակվան Պոլսոյ երիտասարդ գործիչներից մէկի Լ. Ս. ին Պոլսից եւ վերջը Եգիպտոսից գրած նամակներից կտորներ. Այս գրողն այն երկու տաճկահայ ուսանողներից մինն է, որը «Արեւելեան բիւրօյի» հետ չը համաձայնելով ետ էր դարձել 1902ին:

97, յուլիս 27 Պոլիս

„Արդէն անկէ շատ առաջ խօսելով Պոլսոյ գործունէութեան մասին իմ կարծիքս գրած էի. Պիտի մասնակցիմ եւս ալ. իսկ եթէ ընելիքնիս պիտի ըլլայ չնչին բան մը, տկար ծրագիր մը անշուշտ չեմ կրնար անգիտակից անձնազոհութիւն մը ընդունիլ մասնակցելով"։

Այս նամակում կան սարսափելի դատողութիւններ եւ դիտողութիւններ մեր կազմակերպութեան մասին և մենք խուսափում ենք այն գրաղելի նիւթ դարձնել հասարակութեան։

Այդ նամակին Լ. Ս ից պատասխան ստանալով՝ ներսի գործիչը կըրկին գրում է.

„Բազաքը ներսէն առնելու է. մեր գործիչներու մէջ սարսափելի եսեր, անհնելի յաւակնութիւններ գոյութիւն ունին և այդ եսերը ճիւաղային կը դառնան երբ գործերը իրենց ստորադասուին. Ինչ կերպով կարելի է յաղթել անոնց, եթէ ոչ բարոյական միջոցներով. Պոլսոյ մասին խօսելով (և Ժընեւցիներուն խնդիրը աւելի անոր կապուած է) եթէ քիչ ժամանակի մէջ պէտք եղած ուժը կարելի ըլլայ յառաջ բերել, այն ժամանակ շատ [illegible] դիւրանայ հարցը և մենք Պոլսի ուժին միջոցաւ կրնանք ազդել„։

Նոյն մարդի Աղէքսանդրիայից գըրած նամակից.

Նոյեմբ. 28. 97 թւ. Աղէք.

„Վա. վերջին շաբաթ ստացածս նամակը կը թելադրէ ինձ առանց հին նամակիս պատասխանին սպասելու, գրել.

„Հրապարակ հանելու հարցի մասին գրած էր. կըսէր թէ „իմ կարծիքովս պէտք է ամէն բան հրապարակել բացէ ի բաց մէջտեղ դնել և բաց կախ մղել„....

Ահա վերը յիշած այս փորձը իր դառն մանրամասնութիւններով ամբողջութեամբ այս անգամ ինձ յոյս չէր թողնում ներքնապէս ազդելու մասին։ Մի կացութիւն, որի հրապարակումը ութ տարի առաջ անյարմար էր համարվել ներքին պայքարով շտկելու սին յոյսով այսօր կրկնվելու վրա էր ու պէտք էր հրապարակել միանգամ ընդմիշտ չարիքները արմատախիլ անելու. համար Քրիստափորն էլ այդ միջոցներում Սոֆիա էր գտնվում, ու գործավարը նա էր հանդիսանում. պէտք էր նրա վրա ազդել հրապարակային բարոյական ճնշումով. ուրիշ միջոց չըկար, ու ես ամենասրբազան պարտականութիւն համարեցի տարիներով մոլորված, բազմաթիւ գործիչների ու ընկերների բողոքի և կարծիքների արտայայտիչը լինել, որոնց հետ միշտ բաժնեկից եմ եղել, ինքնաբերաբար շատ անգամ առանց նրանց ճանաչելու եւ հետ երբ յարաբերութիւն ունենալու, ամբողջ պատասխանատուութիւնը առնելով ինձ վրա.

Ի հարկէ իմ այդ բացարձակ եւ մինչեւ օրս Դաշնակցութեան մէջ չը տեսնված քայլը հաճելի չէր լինի մեծ ու խոշոր սիստեմի պաշտպան գործիչներին ու գործից անուն քարշ տուողներին, և կսկսէին զանազան վարկաբեկող բացատրութիւններ ու ոտնձգութիւններ իմ անձիս դէմ, ասածներիս արժէքը կոտրելու համար. Նրանք չը գիտէին փաստերի ու դոկումանների այս հարստութեան գոյութիւնը։

Այս երկար ու բարակ փաստացի մերկացումներից յետոյ Դաշնակցական բոլոր մարմիններին և ընկերներին մնում է փութացնել Ընդհանուր Ժողովը, նոյնիսկ եթէ կարելի է նշանակված ժամանակից առաջ անելու։

Իսկ մօտիկ ապագայում մենք կանդրադառնանք այն միջոցների վրա, որոնցով կարելի է կազմակերպութիւնը փրկել անկումից և նրան դնել իրական յեղափոխական և նպատակայարմար հիմքերի վրա,

ՎԱՐԴՕ

ՀԱՅԸ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

—()o()—

Մարտ 30-ին 1905 թ. Մոսկուայի Դատաստանական Պալատում քննւում էր ընկեր Աստուածատուր Գնունեանցի գործը, որը ձերբակալւել էր 1904 փետրվարի 15 ին եւ մեղադրւում էր Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Բեան Մոսկւայի Կոմիտէտին անդամակցելու համար.

Դատարանի նիստը բացւելուն պէս ամենից առաջ երկար վիճաբանութիւն տեղի ունեցաւ Գնունեանցի և դատարանի նախագահի միջեւ. Դատաւորների սրահը մտած ժամանակ Գնունեանցը ոտքի չը կանգնեց եւ նախագահի հարցումին՝ թէ նա՞ է Գնունեանցը, այս վերջինը պատասխանեց նստած։ Նախագահը յիշեցրեց նրան, որ ինքը իրաւունք ունի նրան ոյժով ստիպել հնազանդելու օրէնքի պահանջներին, որ կարող է մեղադրեալին դուրս հանել տալ դատարանի սրահից եւայլն. Գնունեանցը պատասխանեց թէ ինքը մտադրութիւն չունի ռուսաց օրէնքների պահանջները կատարել, թէ ոտքի կը կանգնի ու կը նստի երբ կը ցանկանայ եւ թէ ինքը բոլորովին հակառակ չի լինի, եթէ իրեն սրահից դուրս հանեն որովհետեւ նա ոչ թէ իր կամքով է դատարան եկել, այլ ստիպմամբ։ Յետոյ նա ասաց, որ ռուսաց օրէնքը եւ դատարանը իրաւունք չունեն յարգանք պահանջելու, քանի որ նրանք յարգանքի արժանանալու համար շատ քիչ գործ են կատարել։

Նախագ. եթէ դուք չէք յարգում օրէնքի պահանջները, գէթ քաղաքավարութեան համար վեր կացէք,

երբ դատարանի հետ էք խօսում ։

Գնունեանց. Ձեզ հետ խօսելիս ես կարող եմ կանգնել, ի նկատի առնելով ձեր տարիքը. բայց դա ոչ մի առնչութիւն չունի օրէնքը յարգելու հետ ։ Իսկ ինչ վերաբերում է քաղաքավարութեան կանոններին այդ մասին մեզնից ամեն մէկը առանձին կարծիք կարող է ունենալ եւ մենք չենք հաւաքուել այստեղ քաղաքավարութեան կանոնները մշակելու համար Եթէ դուք արդարադատութեան մասին, որի պաշտպան էք համարում ձեզ, այնպիսի գաղափար ունէք, որ կարող էր այդպիսի չնչին բաների համար դուրս հանել տալ դատարանի սրահից հանել տուեցէք ։ Այդպիսով դուք մի անգամ եւս կապացուցանէք, որ մեզանում դատարան չկայ այլ կայ ոստիկանական դոնփակ կամայականութիւն ։

Դրանից յետոյ Նախագահը կարդաց արդարադատութեան մինիստրի կարգադրութիւնը դատարանը դռնփակ անելու մասին եւ Գնունեանցի այն հարցումին, թէ արդեօք պալատը կարո՞ղ է այդ կարգադրութիւնը փոխել, Նախագահը ինչ որ յօդուածների վրայ մատնանիշ անելով բացասական պատասխան տուեց ։ Այդ ժամանակ Գնունեանցը յայտարարեց թէ քանի որ դատարանը դռնփակ պիտի լինի ու այդպիսով անկարելի պիտի դառնայ, որ հասարակաց կարծիքը, այդ միակ դատաստանը որը կարող է անաչառ կերպով դատել յեղափոխականների եւ կառավարութեան միջեւ եղած խնդիրները,— իր կոնտրոլը ունենայ ուստի ինքը միանգամայն աւելորդ է համարում իր ներկայութիւնը դատաստանական քննութեան ժամանակ եւ նախազգուշացնում է նախագահին որ ոչ մի հարցումի չը պիտի պատասխանի ։ Միեւնոյն ժամանակ նա իրան է վերապահում վերջին խօսքը առնելու, որովհետեւ իր յեղափոխական պարտականութիւնն է համարում՝ օգտուել ամեն մի պարագայից իր գաղափարները տարածելու համար։ Դատախազը գլխաւորապէս աշխատում էր բնորոշել Ռ. Սոց.-Դէմ. կ.-թիւնը. Նա մատնանշեց այդ կուսակցութեան միջազգային բնաւորութիւնը, նրա ծրագրի եւ թէորիական հայեացքների միակերպութիւնը եւրոպական սոց. դէմօկրատական կուսակցութիւնների հետ, Նրա սոցիալիստական նպատակը որը մարքսիստների համոզումով կարող է իրագործուել միայն սոցիալական յեղափոխութեամբ։ Դատախազին յատուկ կերպով բնորոշելով սոցիալական յեղափոխութիւնը, նա ասաց որ ռուսերէն սովորական սճի վերածելով մեր սոցիալ-դէմօկրատիան երկրորդ պուգաչովեան արշաւանք է նշանակում ։ Յետոյ նա կանգ առաւ այն տարբերութեան վրայ, որ գոյութիւն ունի եւրոպական սոցիալ դէմօկրատական կուսակցութեան եւ Ռուսաստանի սոց.-դէմօկրատիայի գործունէութեան եղանակների միջեւ, ասելով որ այս վերջինը ոչ այնքան իր գաղափարների պրօպագանդով ու ագիտացիայով է պարապում, որքան բանւորներին ապստամբութեան եւ մասսային բռնի միջոցների դիմելու է հրաւիրում։ Նա շատ քիչ կանգ առաւ մեղադրանքի իրաւաբանական կողմի վրայ, ասելով որ այն փաստը, որ մեղադրեալի մօտ գտնուել է թռուցիկի ձեռագիրը այն իսկ մի կողմ թողնելով թէ, այդ թռուցիկը իր ձեռքով է գրած թէ մի ուրիշի, արդէն ապացուցանում է, որ մեղադրեալը Սոց. Դէմ. կ.-թեան մի անդամն է. Նա մասնաւորապէս չէր շտում էր, որ այլ եւս ոչ ոքի համար գաղտնիք չէ Ռ. Ս.-Դ. Բ. Կ.-թեան գոյութիւնը, որը թէ իր օրգանները ունի եւ թէ իր պատգամաւորական ժողովները, ուստի ինքը չի ջանայ պաշտօնապէս ապացուցանելու, որ Ռուսաստանի Ս-Դ. Բ. Կ-թեան Մոսկուայի կոմիտէտ ստորագրութիւնը ոչ թէ մի կեղծիք է, այլ իսկապէս գոյութիւն ունեցող կազմակերպութեան ստորագրութիւն է։

Գնունեանցի պաշտպանը (երդ. հաւատ. Գուննուշկին) դատախազին պատասխանեց միայն իրաւաբանական տեսակէտից մատնանիշ անելով մեղադրանքի անհիմն լինելը քանի որ ոչ մի ուղղակի ապացոյցներ չըկան որոնք հաստատէին թէ մեղադրեալը մասնակցութիւն է ունեցել կուսակցութեան Մոսկուայի Կոմիտէտի մէջ։

Գնունեանցի ճառի ժամանակ նախագահը միայն երկու անգամ նրա խօսքը կտրեց եւ այն էլ դատախազի հասցէին խիստ խօսքեր ուղղած դէպքերում. Միացեալ ժամանակը նա կատարեալ ազատութիւն էր տալիս։

Գնունեանց. Պ. Պ. դատաւորներ. ամենից առաջ ես կը ցանկանայի պարզել իմ վերաբերմունքը դէպի ռուսաց դատարանը եւ ռուսաց օրէնքը, որովհետեւ երէկ Նախագահի հետ ունեցած վիճաբանութիւնից դուք կարող էիք սխալ հասկացողութիւն կազմել սոց.-դէմօկրատիայի վերաբերմունքի մասին դէպի այս կամ այն կառավարչական հիմնարկութիւնը ։ Մենք անիշխանականներ չենք եւ ռուսական կայսերական դատարանի մեր չընդունելը ոչ թէ պետութիւն եւ կառավարչական այլ եւ այլ հիմնարկութիւններ չընդունելու անիշխանական համոզումների հետեւանք է, այլ ուղղակի դա առաջ է գալիս այն հանգամանքից որ մեր դատարանները չնորհիւ Ռուսաստանում թագաւորող ոստիկանական րէժիմի առանձին եւ յատուկ բնաւորութիւն են կրում Ինչպէս գիտէք, մեր Արեւմտեան Եւրոպայի ընկերները, մի րոպէ անգամ չը մոռանալով, որ բուրժուազական կարգերի օրով իրենց պաշտպանութեան համար հաստատուած թէ կառավարութիւնը եւ թէ բոլոր օրէնքներն ու պետական հիմնարկութիւնները խիստ դասակարգային բնաւորութիւն են կրում, տնուամենայնիւ նրանք ոչ միայն այդ բուրժուազական դատարանին այնպէս չեն վերաբերւում, ինչպէս մենք, այլ եւ ընդհակառակը, ամեն կերպ աշխատում են օգտուել օրէնքով թոյլատրուած բոլոր միջոցներից՝ թէ իրենց դասակարգային կռիւը մղելու եւ թէ անհատների բռնադատուած շահերն ու իրաւունքները պաշտպանելու համար, իրաւունքներ, որոնք ձեռք են բերուած բուրժուազական կառավարութեան դէմ երկար կռիւներ մղելուց յետոյ: Արդէն այն հանգամանքը որ նրանց քաղաքական գործունէութիւնը օրինական հողի վրայ է դրուած, պարզ ապացոյց է որ այնտեղ գոյութիւն ունեցող օրէնքները նրանց միջոց են տալիս ազատական կռիւը մղելու, առանց պրօլէտարիատի շահերին վնասելու : Բոլորովին այլ կերպ է մեզանում ։ Միայն սոց.-դէմօկրատները չեն, որ բացասական կերպով են վերաբերւում մեր դատարանին եւ օրէնքներին։ Ռուսաստանի ժողովուրդը եւ, այսպէս կոչուած, լուսաւորուած հասարակութեան բոլոր գիտակից տարրերը նոյն կերպ են վերաբերւում ։ Տարբերութիւնն այն է միայն, որ մենք աւելի հետեւողական ենք եւ կոմպրոմիսներ չենք անում այնտեղ, որտեղ անում է վախկոտ լիբէրալիզմը ։ Մտաբերեցէք. պ. պ. դատաւորներ, վերջերս դատաստանական բարեփոխութիւնների 40 ամեակի առթիւ տեղի ունեցած բանկէտները, յիշեցէք այնտեղ քուէարկած որոշումները մտաբերեցէք թէ ինչպիսի միահամուռ ոգեւորութեամբ ամբողջ ռուսաց հասարակութիւնը, մինչեւ իսկ չինովնիկութեան մի քանի խաւերը, որոնց թւում կային եւ դատաստանականներ, դատապարտեց մեր դատարանը եւ մեր օրէնսդրութիւնը, եւ այն ժամանակ ձեզ համար պարզ կը լինի, թէ ինչու մեր դատարանը ոչ մի իրաւունք չունի յարգանք պահանջելու դէպի ինքը ։ Մեզանում իսկապէս դատարան չկայ, այլ նրա փոխա-

---

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՕՐԻԱ ՊԱՎԼՕՎՆԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Պրակտի յիշողութիւններից․ Ամրան արկածներ բաւական տարօրինակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից) 46

Թ.

(Շար. նախորդ թիւի)

—Բացատրածս պատճառներով, շարունակում է Բուրունը իր նամակով. Աֆանասիչը իմ խոզային բարեկամութեան մէջ վերյիշեց իր երիտասարդութիւնը վերակենդանացաւ ու գլուխը բարձրացրեց. մինչդեռ տանտիկինները ինձ տուել էին իբր մունջ, հնազանդ եւ փորձված առաջնորդ ։ Զէխովը մի պատմվածք ունի, որի մէջ մի խուլ անկիւն ընկած դերձակ արտասուելով հրճվում է, երբ մի հազարապետ պարտքի փոխարէն նրան մի ապտակ է հասցնում. այդ դէպքը դերձակին յիշեցնում է մայրաքաղաքի իր յաճախորդների բարքերը, որոնց համար նա երբեմն աշխատել էր ու վերջերը ափսոսանքով մտածում էր նրանց մասին իր ընկած արջային անկիւնում ։

Ինձ թւում է թէ Աֆանասիչի զգացումները դէպի ինձ նմանում էին յիշեալ դերձակի դէպի կուարար հազարապետին տածած զգացումներին

Ես էլ շատ տխուր եւ անտանելի վիճակում, նեարդերս քայքայված, անձնասիրութիւնս վիրաւորված էր ։ Վիկտորիա Պավլովնան էլ անգութ էր ։ Մի խօսքով անձնասպան լինենելու ատրճանի հասած ։

Այս տեսակ տրամադրութեան մէջ ամեն մի ծաղրածուի սիրով ես հանդիպում ամեն մի զւարճութեան առջեւ ուրախանում ։ Հոգիս վրդովված է. ո՞վ կարող է մօտենալ վրձիններին եւ ներկերին. հեռու բոլոր ծեփումները ։ Աֆանասիչ, ասում եմ. նայիր շուրջդ կափառնայում չը կայ ուր կարելի է իրականութիւնը մոռնալ ։ Աֆանասիչը հրաշալիօրէն ծանօթ է այս կողմերում բաքոսին եւ վեներային վերաբերեալ գործերին ։ Պէտք է ասել որ ես աւելի բաքոսին էի փնտռում քան թէ վեներային. եւ իրօք այդ իմ դժբախտութիւնս է ։ Ես հարբեցող չեմ եւ ժառանգականութեան տեսակէտով բարեյաջող պայմաններում եմ գտնվում. ուրեմն եւ արբեցող չեմ լինի. բայց խմելուց չեմ հրաժարվում երբեք եւ խըմածս միջոցին չուտով, զօրաւոր կերպով արբենում եմ, առանց նկատելու, մանաւանդ երբ հոգեկան դրութիւնս վատ է եւ նեարդերս գրգռված են. դրա համար էլ հարբած ես շատ վտանգաւոր եւ շատ գէշ եմ ։

Երկու թէ երեք անճոռնի քէֆերից յետոյ, որոնք Ներոնի քէֆերին շատ քիչ էին նմանում, ես յանկարծ չափազանց չարացայ Աֆանասիչի վրայ, թէ ինչպէս նա համարձակվեց ինձ խոթել ամեն տեսակ ցեխի մէջ, ու նրա վերաբերմամբ դարձայ աւելի կոպիտ եւ լիրբ ։ Գիտէք Ֆաուստը միշտ տրամադրութիւն ունի իրնից ունեցած դժգոհութիւնը Մէֆիստոֆէլի գլխին թափել ։ Թէեւ Աֆանասիչ եւ Մեֆիստոֆէլ..։

Այն ինչ ես չը նկատեցի թէ ինչպէս այդ քէֆերում կորցրի բոլոր այն յարգանքը որը Աֆանասիչը ունէր դէպի ինձ ! Այժմ Աֆանասիչը իմ մէջ տեսնում էր իր եղբօրը, գաղտնագողի զբօսասէրի, որը այլեւս իր առջեւ չէ կարող պարծենալ իր բարձր նկարագրով ։ Աֆանասիչը ինձ ճանաչեց իրեն հարազատ խոզային պատկերում, որում կարելի է թէ երբեմն ես իրան էլ էի գերազանցում ։ Ասում եմ ձեզ, արբած ես շատ գէշ եմ ։ Անհաւանական չէ որ այդ տեսակ կասկածելի արկածներից յետոյ Աֆանասիչը զգաց որ ես իր ձեռքում եմ գտնվում, ու եթէ այդ բոլորը պատմէր Արինային եւ նա էլ Վիկտորիային, ես ի հարկէ, Աֆանասիչին ջարդուփշուր անելուց յետոյ, առանց ետ նայելու կը փախչէի Պըրօվօլայից ։

Առհասարակ Աֆանասիչը այնքան յիմար չէ, որչափ երեւում է կամ ինքզինքը ներկայացնում է. օրինակ շատ լաւ հասկանում էր որ Պուրնիկով գիւղում կատարած մեր բոլոր անճոռնիութիւնները չէին արգիլում ինձ մինչեւ ականջներս սիրահարված միայ Վիկտորիայի վրա, ու խորամանկութեամբ ծաղրում էր իմ երեւակայութիւնը գրէթխէնի եւ Վալպուրգեան գիշերի մէջ ։ Ինքը՝ Աֆանասիչը, իմ կարծիքով, ոտից գլուխ վալպուրգեան գիշերի ուրուականն է. միայն այն է սիրում, գընահատում, կեանք համարում ։ Դիւային չէ, եւ ոչ սատանաներից է, ի հարկէ, բայց գիտէք, այն թափթփուկներից, որոնք սլանում են Բլօքսբերգի շուրջը կէս գիշերային փոթորկում —«եղան է քաշում, աւելն է քաշում. ով չէ թռել, նա կորչում է»

Այդպէս Աֆանասիչը սկսեց արհամարել ինձ. եւ որովհետեւ ես այդ

րէն կայ միայն ոստիկանական փակուած դռներ։ Դրան ապացոյց հէնց այս րոպէին կատարուող, այսպէս անուանեալ, դատաստանական քննութիւնը։ Մեզանում օրէնքներ էլ չրկայ այլ միայն ոստիկանական կամայականութիւն։ Եւ դա զարմանալի չէ. ոստիկանական կառավարութեան մէջ չէ կարող անաչառ եւ անկախ դատարան գոյութիւն ունենալ։ Որպէսզի առանց փաստերի խօսած չը լինեմ, ես իմ փոքր գործի մի քանի մանրամասնութիւններ վրայ միայն կանգ կառնեմ։

(Շարունակելի) «ՎՊԵՐԵՕԴ»
(Ռուս ազատ թերթ)

ՌՈՒՍԱԲԸ ՍՈՒԼ— ԹԱՆԻ ԴԻՄԱՑ

—○○—

Ընդհանուր բարբառ Սուլթանի, Մզկիթում գտնուած միջոցին, 40 մետրի չափ մզկիթից հեռու պայթել է մի դժոխային մեքենայ. պայթումից սպանվել և վիրաւորվել են մի քանի տասնեակ մարդիկ, ձիեր, օդը բարձրացել կառքեր, բայց իրեն՝ Սուլթանի և նոյն իսկ նրան շրջապատող բարձր անձնաւորութիւններից ոչ մէկին բան չէ եղել։ Պայթումը ահեղի է եղել, սարսափը մեծ. բայց Սուլթանին և նրա պալատականներին ոչինչ չէ եղել։ Բոլոր օտարական վկաների պատմածքի համեմատ Սուլթանը բոլորովին չէ կորցրել իր պաղարիւնութիւնը ու կառք նստելով ինքը ձիերը վարելով և այցելու բարձրաստիճան օտարականներին ժպտալով բարեւելուց յետոյ ալացել է գէպի պալատը...

Պատմում են որ Սուլթանը եթէ մզկիթի մէջ խօսակցութեան չը բռնվէր, անպատճառ պէտք է սպանվէր. բայց այդ էլ անհաւանական է երեւում. որովհետեւ Սուլթանի անձը շրջապատող պաշտօնեաներին էլ ոչ ինչ չէ եղել։ Դժոխային մեքենան դրնողները բացարձակօրէն սխալ են հաշւել դժոխային մեքենայի ուժի ազդեցութիւնը որոշ տարածութեան վրա։

Այսպէս թէ այնպէս դժոխային մեքենան հասել է մինչեւ Սուլթանի մզկիթը. թերեւս ժամանակին աւելի մօտիկ պայթի. եթէ ի հարկէ սուլթանական կառավարութեան պգուշութիւնները չը բազմապատկվեն այդ տեսակ մի երկրորդ փորձ կրկնելու առաջըր առնելու համար։

Հեռագիրների մէջ յիշվում է թէ կասկած կայ և հայերի մասին։ Մենք չենք կարծում որ հայերը մասնած լինէին այդ տեսակ մի անօգուտ գործ կատարել. որի հետեւանքը մանաւանդ օգուտ չը պէտք է տար և հայերիս բացարձակ անիշխանական պէտք է ներկայացնէր Եւրոպայի աչքում ու Սուլթանի ձեռքում մի լաւ գործիք հայերի հետ վարվելու իր ուզածի պէս, ինչպէս ամենաազատ եւրոպական կառավարութիւնները վարվում են իրենց երկրում անիշխանական գործեր կատարող ների հետ՝ «յուէնքն ջարդելու»։

Սուլթանին այդ դժբախտութիւնից ազատվելու համար առաջին շնորհաւորողը եղել է հանրապետական Ֆրանսայի արտաքին գործոց նախարար և նախարարապետ Ռուվիէ։ Ֆրանսայում իր հպատակների դահիճ հաշակված մեհապետի հանդէպ այդ պիսի մի քայլը կառավարութեան կողմից, ցոյց է տալիս թէ պաշտօնական Ֆրանսան որչափ հեռու քրքիր է տանջվողների վիճակով։

ՌՈՒՍԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

—()○—

Զը նայած կառավարութեան արգելքին Մոսկուայի մէջ կայացեր է Զեմստվօյի ներկայացուցիչներուն համագումարը։ Համագումարի բացման օրը ոստիկան նայետր քանի մը պաշտօնեաներով եկած է արգիլելու, սակայն ժողովի նախագահ կոմս Հէյտէն մերժեր է ժողովը ցրել յայտարարելով որ կրնան միայն արձանագրութիւն կազմել։ Երբ հարցուեր է մասնակցողներուն անունները, պատասխանուեր է թէ «ամբողջ Ռուսիան է որ իր մասնակցի այդ ժողովին»։

Ոստիկանութեան երթալէն անմիջապէս յետոյ, ժողովը գործի սկսեր է և քննութեան ենթարկելով Պոլիկինի ծրագիրը զայն ոչինչ գտեր է ժողովրդային պահանջներու հանդէպ որ իրական սահմանադրութիւն մը կուզէ։

Զեմստվօյի բռնած այս դիրքէն կը հասկցուի որ Պոլիկինի կազմած խարեբայական ծրագիրը մեծ դիմադրութեան պիտի հանդիպի և Ցարը ստիպուած պիտի ըլլայ նոր զիջողութիւններ ընել։

Երէկ հեռագիրները հաղորդեցին որ Ցարը ծովով ճամբորդութիւն մը պիտի ընէ. կը կարծուի թէ Ցարը բացարձակապէս կը փախի ապագայ մեծ չարիքներու ուրուականէն սարսափահար եղած։

Պաշտօնեաներու սպանութիւնները կը շարունակուին. օր չի անցնիր առանց պաշտօնեայի մը սպանման. Կսպանուին մեծ ու խոշոր և ամեն տեսակ զէնքերով։

Օտեսայի և այլ քաղաքներու հրէաները սկսած են մեծ քանակութեամբ գաղթել դէպի Ամերիկա. կոտորումներէ կը վախնան. որովհետեւ կառավարութիւնը ամէն ճիգ կը թափէ իր դէմ կատաղած ժողովրդին բարկութիւնը ուղղել դէպի կայսրութեան մէջ ապրող օտար ցեղերը։

Մանջուրիա գրեթէ զօրք չի ղրկուիր, պահեստի զօրքերը և սպաները ոչ միայն տրամադրութիւն չեն յայտներ Մանջուրի երթալու, այլև մեծ մասամբ համակիր են յեղափոխականներուն։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՈՍԿԵՀԱՆԳԻ ԳՈՐԾԻՉԻՆ

—Ընդունեցինք ձեր երկրորդ նամակը, որով առաջարկում էք ձեր նախորդ նամակի հրապարակումը յետաձգել ինչ-ինչ յուզիչ, հանրային մեծ պատճառներ մէջ տեղ բերելով և խոստանալով յարմար ժամանակին համաձայնելու։

չէի նկատում, ու շարունակում էի նրա հետ նոյն մտերմահրամայողական եղանակով վարվել, նա սկսեց կամաց կամաց վիրաւորել եւ ատել։

Վերջերում, նոյն մեր բացատրութեան մէջ, Աֆանասիչը լիակատար բացատրութեամբ խոստովանեց ինձ որ դաղտնաբար բարկանում էր իմ ամեն մի յանդգնութեան համար, բայց չէր համարձակվում յայտնի կերպով... որովհետեւ ինքը ծեր է, իսկ ես...

Բանից դուրս է գալիս, որ ես նը րան ներկայանում էի իբր բարձր նկարագիր, իսկ նա այդ բոլորից ամենաբարձրը ընդունում էր իմ բռունցքները եւ միայն նրանից վախենում։

Իմ անյաջողութիւններս Վիկտորիայի վերաբերմամբ անկասկած նրան զւարճացնում էին հոգու խորքերից. թէեւ նա միշտ ինձ ջերմօրէն ցաւակցում էր։ Նա էր որ ինձ դրդեց Ֆէնիայի պատկերը նկարել եւ այդ նրա ծաղրական քայլերից մին է։ Երեւակայում եմ թէ ինչ չար զգացումով դիտում էր երբ ես արդէն իմ ցաւերս Վիկտորիայի հանդէպ գանգատած նստում էի այդ աղջկան նկարելու մտածելով—նկարիր, նկարիր իմ աղջկաս պատկերը... իսկ քեզ միայն փուչ ընկուզ..

Պէտք է ասել որ Աֆանասիչը ինձ յայտնից որ այդ աղջկայ պատկերը հաճելի նւէր կը լինի Վիկտորիայի համար, որովհետեւ ամբողջ շրջակայքում Վիկտորիան միայն այդ երեխային է սիրում։ Եւ հասկանալի է. երեխան համակրելի եւ շատ սիրուն է... Մեր այդ նկարչական նիստերի լուրը հասնում է Արինային ու իր վհուկային հոտառութեամբ գէշութիւն է գուշակում իմ այդ ձեռնարկից եւ բացատրութիւն ունենում Վիկտորիայի հետ, որը նրան համոզում է թէ դրանում ոչ մի գէշութիւն չը կայ. եւ գործը վերաբերում է միայն սիրուն երեխայի նկարին։ Այդ էլ ճիշդ է. եւ այն էլ ճիշդ է։ Ես մինչեւ վերջին օրը ոչ մի կասկած ունէի։ Իսկ ինչ վերաբերում է Աֆանասիչին նա Վիկտորիային եւ Արինայի հետ ոչ մի հակառակութիւն ունի, որովհետեւ նա Վիկտորիային պաշտում է, իսկ Արինայից նախապաշարեալ վախով սարսափում որ նոյնպէս մօտենում է պաշտամունքի։ Աֆանասիչը նրանց վնասեց անգիտակցաբար, կատաղած վայրկեանում առանց ըմբռնելու թէ ինչ է խօսում։

Վիկտորիայի հանդէպ յայտնի սխալը գործեց յանկարծակի։ Ես չէի նկատել որ Աֆանասիչը ատում է ինձ բայց նկատում էի որ փոխված է. առաջւանը չէ. փոխադարձ չարութիւններ է անում ինձ։ Ամեն մի այդ տեսակ դէպքից յետոյ ես աւելի կոշտ էի վարվում նրա հետ եւ ծաղրանքով. իսկ նա իր յանդանքը խոստովանողի պէս աւելի հաճոյակատար եւ հլու էր դառնում։

Ես արդէն վաղուց նկատել էի որ Ֆէնիայի ու Աֆանասիչի մէջ նմանութիւն կայ հակառակ Ֆէնիայի մանկական գեղեցկութեան եւ Աֆանասիչի ծեր անճոռնիութեան ազգակցական նմանութիւն կայ, Իմանալով որ Ֆէնիան ընկեցիկ է միշտ ծաղրում էի Աֆանասիչին հարցնելով արդեօք որի՞ց է առաջ եկած։

Դուք յիշում էք այն իրիկուն երբ Վիկտորիան այնպէս յանկարծ մեր առջեւ ելաւ եւ այնպէս տարօրինակ երկդիմի էր պահում իրեն... Օ՛ նը րա երգը դեռ մինչեւ օրս լսվում է ականջումս... այն օրը ինձ բոլորովին քայքայեց պատրաստ էի արիւն արտասւել։

Ահա այդտեղ ուղեղումս գամի պէս ցրցվեց այն միտքը թէ Վիկտորիան մեզ խաբում է. որ նա ունի սիրեկան որի համար ինձ արհամարում է. որին նա ճարպիկութեամբ մեզնից թաքցնում է. որի մօտ երեկոյին մութ պուրակն էր վազում տեսակցութեան ռոմանտիկ, շաղերի միջով. ու մեզնից փախցած այն ժամանակ, հիմա կորցրածը եթէ ուզում բերել։

Ամբողջ գիշերը ես թափառեցի պարտէզում... ի՞նչի հարցնող լինիս։ Չը գիտեմ։ Արդեօք անքնութեանս վիշտը մի կերպ մեռցնելու համար, թէ ո եւ է մէկին բռնել էի մտածում..

Այդ փոթորկոտ, ծանր եւ չար գիշերը ինքս էլ ինձ հարցնում էի թէ ինչ իրաւունք ունեմ Վիկտորիայի վրա բարոյական, որի մասին յետոյ դուք այնքէս սուր կերպով հոգց արիք։ Ու հասկանում էի որ ես բարոյական իրաւունք չունեմ, միւս կողմից զգում էի իմ ամբողջ էութեամբ—թքել եմ ամեն մի բարոյական իրաւունքի վրա. սիրում եմ պէտք է որ սիրվեմ. Թոյլ չը պէտք է տամ որ նա ուրիշին սիրէ, բացի ինձնից։

Առաւօտեան դէմ նեարդերս քայքայվեցին հին պիանօի պէս. բայց կրկին նկարելու գնացինք... բանի պէտքը չէր. ձեռքերս դողում էին... փունջերիս երակները բաբախում զօրեղապէս. վրձինը քաթանի վրա չէ շարժվում... Աֆանասիչը տեսնում է որ ես լաւ վիճակում չեմ, ասում է.

—Աւելի լաւ չէ շտկվելու համար գնանք մի մի հատ նետենք...

(Շարունակելի)

Մենք ձեր սիստէմի մարդ չենք. գաղտնագողի յարձակումները և վարկաբեկումները ոչ մի սրբութեամբ արդարանալ չեն կարող, որովհետեւ նրանք աղտոտում են ամեն մի սրբութիւն եւ այն վերածում աղտոտ գործիքի զանազան անհատների ձեռքում իրենց ոչ հաճելի երեւցած մարդկանց սեւացնելու համար...

Մենք մեր վերջին յօդուածներով գրեցինք շատ բան, որ կարող էր և պատասխան լինել ձեր նախորդ գրութեան, պակաս մընացածն էլ կասենք, յարմար ժամանակին. Անշուշտ այդ միջոցին դուք էլ ժամանակը հասած կը համարէք.

Մենք ձեր առաջին գրութեան կարեւորութիւն չը տուինք իբրեւ անհատի գրութեան, այլ իբրեւ ազեղ արդիւնքի՝ խնամքով, լօյօլայական հոգեբանութեամբ ստեղծված սիստէմի որ թունաւորում է ամեն մի մաքուր մթնոլորտ.

Երբ մի գործիչ, ուրիշ աւելի մեծ շահերի պատճառով, ընդունենք այդ, անկարող է ճակատ ճակատի պախարակել ուրիշ մի հանրային գործիչի, ու նրա անմիջական պատասխանը ստանալ. նա ինքը պէտք է համբերութիւնը ունենայ սպասելու այդ յարմար ժամանակին և ապա իր մեղադրանքները մէջտեղ նետէ ոչ թէ հրապարակ նետելուց յետոյ վահանվի սրբութիւններով և իրենից հարւած ընդունողին առաջարկէ սպասել հաշիւները յետոյ կարգադրելու.

Դուք ձեր այդ քայլով գիտէք ի՞նչ ազեղ տեսարան էք մէջ տեղ բերում. ճիշտ այս.—Դուք պատի ետեւում թաքնված իմ գլխին քար էք նետում, ես յաջողում եմ ձեր օձիքից բռնել, և հասկանալ թէ դուք էք եղել և մի քանի օր առաջ նոյնպէս գաղտնագողի. ետեւից փոքրիկ քար նետողը, ու բնականօրէն ուզում եմ իմ մարդկային իրաւունքս պաշտպանել և հակահարւածը տալ. և դուք առարկում էք... Խնդրեմ, յանուն այս ինչ և այն ինչ սրբութեան սպասեցէք դեռ ժամանակ կայ մեր հաշիւները կարգադրելու. Ես հարուածեցի վնաս չունի. դուք բարի եղէք սպասելու...

Խնդրեմ ասացէք, միթէ այդ տեսարանը զաւեշտական չէ՞....

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

ՍՈՒԼԹԱՆԻ ՍՊԱՆՄԱՆ ՓՈՐՁԸ

„Տի Ցայթ“ թերթը հետեւեալ տեղեկութիւնները ստացած է սպանման փորձի մասին. Այդ փորձը կատարուած է շատ ճարպիկօրէն, տինամիտով բեռնուած կառքով մը։ Այն վայրկեանին երբ Սուլթանը դուրս պէտք է ելլար մզկիթէն կառքին մէջ նստած երկու մարդիկ, որոնք արտաքուստ անգլիացիներու կը նմանէին եղեր կը բռնկեցնեն տինամիտը. Թէ այդ երկու մարդը և թէ կառապանը կտոր կտոր եղած են, այնպէս որ ոչ ոք կրնայ հասկնալ երբէք թէ փորձը բնողները ինչ ազգի կը պատկանէին, ուստի և Պոլսոյ մէջ տեղի ունեցած ձերբակալութիւնները զուր են. Մեղաւորները տեղնուտեղը ոչնչացած են.

— Պոլսէն Վիա Թրնօվա սէյմէն, կը հեռագրեն. Հակառակ խիստ խուզարկութիւններու և անթիւ ձերբակալութիւններու դաւադրութեան փորձը բնողը ձերբակալուած չէ. Բազմաթիւ ոստիկանապետեր նշանակուած են, որոնք կը փոխարինեն Ֆէհմի փաշան և ընկերութիւնը. Լուր կայ որ պալատ գրկուած է անստորագիր նամակ մը, որով Սուլթանը շրջապատողներուն կիմացուի թէ ներկայ դաւադրութիւնը պարզ ազդարարութիւն մըն է Թուրքիոյ մէջ եւրոպական պետութիւններու պէս ազատութիւն և բարենորոգումներ մտցնելու համար. Եթէ ներկայ ռէժիմը շարունակուի. հակառակ ձեռք առած բոլոր զգուշական միջոցներու նոր փորձեր պիտի ըլլան թէ Սուլթան Համիտի և թէ կայսերական տան բոլոր անդամներուն դէմ.

Ամենքն ալ հաւատացած են որ այդ սպառնալիքները բացառական ազդեցութիւն պիտի գործեն Սուլթանին վրայ ու ընդհակառակը բռնապետական ճնշող միջոցները պիտի զօրեղանան.

Ելտըզին բնակիչները սարսափահար եղած են այդ փորձերէն.

— ՊՈԼԻՍ, 10 յուլիս.— Երէկ ժամը 11/4 ցորեկէն վերջ սարսափելի որոտում մը լսուեցաւ ամբողջ Պոլսոյ, նոյնիսկ Հայտար փաշայի մէջ. Թնդանօթի որոտումներու կը նմանէր. Յետոյ իմացուեցաւ թէ սարսափելի պայթում մը տեղի ունեցեր է „Համիտիէ“ պալատական մզկիթին քով, երբ Սուլթանը իր աղօթքը վերջացրած մզկիթէն դուրս կելլար. Սուլթանը խօսքի բռնուելով Ուլէմայի մը հետ արդէն վերջացուցած էր խօսակցութիւնը, որպէսզի իր բաց կառքը նստի և պալատ վերադառնայ, երբ յանկարծ սարսափելի պայթում մը տեղի ունեցաւ, գետինը շարժեցաւ, և մօտակայ շինութիւններու պատուհաններուն ապակիները փշրուեցան. Այդ վայրկեանին ալպանացիները և Սուլթանի թիկնապահ զօրքերէն խմբովին ներս խուժեցին մզկիթի գաւիթը շրջապատեցին Սուլթանը, այնքան մօտիկցան անոր որ փէսը ճմլեցին. Մարդ մը հրաշքով սպաննուած երկու քայլ Սուլթանէն հեռու ինկած էր. Այդ իրարանցումը օտարականներուն ու դիւանագէտներուն ստիպեց կարծել թէ Սուլթանի շուրջը կռիւ մը տեղի կունենայ. Սուլթանը ամենեւին վախի նշան չը ցոյց տուաւ. ու իր շքախմբէն քանի մը հոգիներու ընկերակցութեամբ, իր պզտիկ և սիրելի զաւակը Պուրհանէտինի իշխանը առնելով կառք նստեցաւ, ձիերուն սանձերը ինքը առնելով, կառքը քշեց. Երբ հասաւ օտարականներու քէօշքին Սուլթանը ժպտաց ներկաներուն և ձեռքով հանգստացման նշան ըրաւ. Սուլթանի քաջ վարմունքը զօրեղ տպաւորութիւն գործած է աւստրիական դեսպանին վրայ, որը այդ օրը պիտի Սուլթանէն ունկնդրութեան ընդունուէր. Ու արդէն կը պատրաստուէր հեռանալ, սպասելով որ միջադէպը արգելք պիտի ըլլայ այդ ունկնդրութեան, յանկարծ կուգայ Իպրահիմ փաշան, որուն պաշտօնն է դեսպանները ընդունել, ու դեսպանը կը հրաւիրէ. Դեսպանը երեք քառորդ ժամ Սուլթանին քով կը մնայ և յուզումի ոչ մէկ նշան կը նկատէ Սուլթանին վրայ.

Դաւադրութեան փորձին վրայ լաւ գաղափար կազմելու համար նախ և առաջ պէտք է նկարագրել տեղին դիրքը. Ելտըզի դիմաց գտնուող շէնքերուն երկար գծին առջեւէն կանցնի 30 մեթր լայնութեամբ փողոց մը, պալատին ձախ կողմէն ուրիշ փողոց մը կը խաչաձեւէ առաջինը. Երկու փողոցներուն կտրուածքին ձախ անկիւնը կը գտնուին պալատին կից շինութիւններ—օտարականներու և դիւանագէտներու յատկացուած քէօշքերը որոնք կուգան Սէլամլըքի հանդէսը դիտելու. Այդ քէօշքերուն դիմացը կը գտնուի „Համիտիէ“ մզկիթը ձախ անկիւնը կը գտնուի հրապարակ մը ուր կայնած են քանի մը զամարտակ զօրքեր, շատ կառքեր, որոնք կը բերեն բազմաթիւ հանդիսատեսներ. Պայթումը տեղի է ունեցեր 5 մեթր հեռու այդ անկիւնէն և ամբոխէն և բազմաթիւ կառքերու միջեւ, ուրեմն մօտ 40 մեթր հեռու մզկիթի գլխաւոր մուտքէն. Երբ պայթումը տեղի կունենայ, մօտիկ գտնուող մարդիկը գետին կը թափին. Կառքը կառապանը և ձին, որուն տակ պայթումը տեղի ունեցած է կոչնչանան. 12.15 կառքեր կտոր կտոր կըլլան. 50-էն աւելի ձիեր կառքերու և զօրքերու սպաննուած կամ ծանրապէս վիրաւորուած են. Թէ որչափ մարդ սպաննուած և վիրաւորուած է դեռ յայտնի չէ. Պայթումին տեղը ծածկուած է կտոր կտոր եղած դիակներով. Տեսարանը սարսափելի էր. Սուլթանը կը հրամայէ անմիջական օգնութիւն հասցնել. Բերայէն շատ մը վիրաբոյժներ կը կանչուին. Սուլթանի հրամանով վիրաւորեալները կը տարուին Կիւմիւշ. Սույու հիւանդանոցը. Ըստ մեր տեղեկութեանց վիրաւորեալներու թիւը 50 ի կը հասնի, իսկ սպաննուածներունը 20ի. Սուլթանի հրամանով քննութիւն կը կատարուի, բայց դեռ արդիւնք մը ունեցած չէ. Չի հասկցուիր գործիքին ինչ ըլլալը. Պայթած տեղը փորուած է և մէկ մեթր շրջագծով ու կէս մեթր տրամագծով փոս մը կը ներկայացնէ, որ կը ցուցնէ թէ գործիքը պայթած է հողին վրայ, և չի հաւատացուիր թէ ռումբ է, որովհետեւ ռումբ մը այդպիսի որոտում չէր կրնար ունենալ. Կըսեն որ դժոխային մեքենայ մը եղած է, ժամացոյցով և կառքին վրայ դրուած, որպէսզի ցանկալի վայրկեանին պայթի. Մէկ բան դրապէս յայտնի է. այն որ գործիքը քանի մը քիլօ պայթուցիկ նիւթ կը պարունակէ եղեր. Պալատին առջեւի բոլոր պատուհաններու ապակիները փշրուած են. մզկիթի մինարէին վրայ գտնուած ժամացոյցը կտոր կտոր եղած է. առհասարակ վնասները բաւական մեծ են. Պալատին մէջ յուզումը մեծ է, ինչպէս և քաղաքին. Որովհետեւ առաջին անգամն է որ անիշխանական փորձ կը կատարուի պալատին քով. Ձերբակալուած են բազմաթիւ մարդիկ, ի թիւս որոց և բժշկական վարժարանի չորս ուսանողներ, որոնք անշուշտ ոչ մէկ բանի տեղեակ չեն. շատ ու շատ դժուար պիտի ըլլայ դաւադրութեան իսկական հեղինակները գտնել: Փորձը Եւրոպացի ամեն շրջանակներու մէջ մեծ դժգոհութիւն առաջ բերած է.

ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մէկ կսուի թէ բժշկական երիտասարդ թուրք ուսանող մը կառքէ մը ռումբը նետեր է, երբ սպայ մը, Սուլթանի մզկիթէն դուրս գալուն պէս անմիջապէս աղաղակեր է. «կեցցէ Սուլթանը», որով իբր թէ սպան նշան տուեր է ռումբը նետելու. ու իբր թէ ուսանողը տեղնուտեղ բռնուած է.

Ետոյ կսեն որ կառքի մէջ մարդ մը տեսեր են հոլլանտական պանիրի գոյնով զանգուած մը բռնած ձեռքը, որը վախէն թէ յուզումէն՝ ժամանակէն առաջ նետեր է ռումբը եւ ինքն ալ տեղն ու տեղը ոչնչացեր է.

Печатницана П.Глушковъ и С-ие, Варна